

ՊԵՊԻ ԾՈՎ ԱԶԱՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՀԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Արթուր Աբովյան

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով ազատ հասանելիության իրավունքին վերաբերող վեճերը թե՛ տեսական գրականությունում, թե՛ պետությունների միջև հարաբերություններում մշտապես ուղեկցվել են հակադիր մոտեցումներով և վարքագծով: Նշված հիմնախնդրի շուրջ հիմնական տարածայնության առանցքը պայմանավորված է եղել միջազգային ծովային իրավունքի երկու հիմնարար սկզբունքի՝ բաց ծովի ազատության և պետությունների ինքնիշխանության առձակատմամբ: Վերը նշված հիմնախնդրի լուծմանն ուղղված պետությունների վարքագծի միմյանց հակադիր մոտեցումները շարունակվում են մինչ օրս, ինչով էլ պայմանավորվում է սույն հոդվածի արդիականությունը:

Հարկ է նշել, որ պետությունների հակադիր դիրքորոշումները ցայտուն են արտահայտվել միջազգային ծովային իրավունքի կողիֆիկացմանն ուղղված բոլոր խորհրդածրոջներում, որտեղ հիմնական տարածայնությունները ներմայրցամաքային պետությունների և ծովեզերք ունեցող պետությունների միջև են ընթացել:

Ֆրանսիացի իրավաբան Ռ. Ժ. Դյուայյուին միջազգային ծովային իրավունքը բնորոշել է հետևյալ կերպ. «Ծովը միշտ ծածկված է եղել երկու հակադիր քամիներով՝ բաց ծովից դեպի ցամաք սլացող քամին ազատության քամին է, ցամաքից դեպի բաց ծով քամին՝ ինքնիշխանություն կրող քամին: Ծովային իրավունքը միշտ գտնվել է այդ հակամարտող ուժերի միջև»¹:

Ինքնիշխանությունը կարելի է բնութագրել որպես պետության անքակտելի հատկանիշ, հնարավորություն՝ ինքնուրույն կարգավորելու իր ներքին և արտաքին հարցերը՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի համընդհանուր և հիմնարար սկզբունքները:

Ինքնիշխանության հայեցակարգը միջազգային ծովային իրավունքում տարբերվում է իր ավանդական բովանդակությունից, ինչը պայմանավորված է ծովային շրջանների փոխկապակցված և փոփոխական հատկանիշներով, որոնք տարբերվում են ցանկացած տեսակի ցամաքային տարածքներից:

Այնուամենայնիվ, ինքնիշխանության սկզբունքը եղել և մնում է ծովային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը, որի զարգացումը պայմանավորվում է ծովեզերք ունեցող պետությունների՝ դեպի ծով իրենց իրավագործությունը ընդարձակելու ցանկությամբ: Ի տարբերություն բաց ծովի ազատության սկզբունքի՝ ինքնիշխանության սկզբունքն ուղղված է ծովեզերք ունեցող պետությունների շահերի պաշտպանությանը: Այս սկզբունքը, ըստ էության, նպաստում է ազգային իրավագործության տարածմանը ծովային շրջանների վրա և աջակցում է օվկիանոսների

¹ R. J. Dupuy, The Sea under National Competence, in Dupuy and Vignes, A Handbook, vol. 1, էջ 247. Տե՛ս նաև D. P. O’Connell (I. A. Shearer ed.), The International Law of the Sea, vol. 1 (Oxford, Clarendon Press, 1982), էջ 1:

«տարածքայնացմանը»²:

Ծովից ազատորեն օգտվելու, ծովերի և օվկիանոսների նկատմամբ որևէ պետության իրավագործությունը թույլ չտալու գաղափարները լայնորեն տարածվել են դեռևս 16-17-րդ դարերում: Միջազգային սովորության իրավունքում բաց ծովը համարվում է տարածություն, որտեղ որևէ պետության ինքնիշխանություն չի տարածվում: Բաց ծովի գաղափարը առաջին անգամ համապարփակ ձևով ներկայացվել է հոլանդացի ականավոր իրավաբան Հուգո Հրոցիուսի կողմից 1609 թվականին հրատարակված *Mare Liberum*³ (Բաց ծով) աշխատությունում:

Սկզբնական ժամանակահատվածում միջազգային սովորության իրավունքում բաց ծովի ազատության սկզբունքը ներառում էր ազատ նավագնացության, ձկնորսության իրավունքները, որն ուղղված էր տնտեսական և առևտրային միջազգային համագործակցության խթանմանը: Հետագայում բաց ծովի ազատության սկզբունքը ընդլայնել է իր բովանդակությունը և ամրագրվել «Բաց ծովի մասին» 1958 թվականի ժնևյան,⁴ ինչպես նաև 1982 թվականին ստորագրված ՄԱԿ-ի Ծովային իրավունքի կոնվենցիաներում⁵:

Վերը նշված կոնվենցիաներում նախատեսվել են ներմայրցամաքային պետությունների դեպի ծով հասանելիության իրավունքի իրացումը երաշխավորող իրավադրույթներ, որոնք բովանդակային առումով տարբերվում են միմյանցից:

Այսպես, «Բաց ծովի մասին» 1958 թվականի ժնևյան կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ *ծովեզերք չունեցող պետությունները ծովերի ազատությունից ծովափնյա պետությունների հետ հավասար իրավունքներով օգտվելու համար պետք է ազատ մուտք ունենան դեպի ծով*: Ընդ որում, նույն հոդվածում նախատեսվում է, որ *ծովափնյա պետությունները պետք փոխադարձության հիման վրա ծովեզերք չունեցող պետությանը իրենց տարածքով տրամադրեն ազատ տարանցում*:

Վերը նշված իրավադրույթից ակնհայտ է, որ «պետք է ազատ մուտք ունենան» բառակապակցությունը չի ամրագրում ծովից և դեպի ծով հասանելիության *իրավունքը*,⁶ բացի այդ, ներմայրցամաքային պետությունների դեպի ծով հասանելիության հնարավորությունը սահմանափակվում է փոխադարձության պայմանով:

Փոխադարձության էությունը այն է, որ ծովեզերք ունեցող պետության կողմից ազատ տարանցման թույլտվության հնարավորությունը պետք է համապատասխանի ներմայրցամաքային պետության կողմից նույնական իրավունք տրամադրելուն:

Այլ կերպ ասած՝ փոխադարձության սկզբունքն ուղղված է իրավունքների և պարտականությունների համաչափության հիման վրա յուրաքանչյուր պետության ազգային շահերի ապահովմանը, սակայն ակնհայտ է, որ աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս ներմայրցամաքային պետություններին փոխադարձության հիման վրա այլ պետություններին տրամադրել նույնական իրավունքներ ծովափերից կամ նավահանգիստներից օգտվելու համար: Նշված սկզբունքը ներմայրցամաքային պետություններին դնում է անհավասար վիճակի մեջ, քանի որ նրանք չունեն նավահանգիստներ, որոնք կարող են տրամադրել այլ պետություններին դեպի ծով հասանելիության իրավունքի իրացման համար: Կարող ենք փաստել, որ վերը

² Տե՛ս Y. Tanaka, "The International Law of the Sea" 3rd edition, Cambridge: Cambridge University Press, 2019, էջ 23:

³ Տե՛ս Hugo Grotius, *Mare Liberum*, Liberty Fund Inc, 2004, https://scholar.harvard.edu/files/armitage/files/free_sea_ebook.pdf, (հասանելի է 23. 11. 2021թ.):

⁴ Տե՛ս Convention on the High Seas, United Nations, 2005, Convention on the High Seas (un.org), (հասանելի է 23. 11. 2021թ.):

⁵ Ծովային իրավունքի Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 8-ին: Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85990>, (հասանելի է 19.1.2021թ.):

⁶ Տե՛ս Y. Tanaka, նշվ. աշխ., 2019, էջ 481:

նշված հանգամանքը հաշվի չի առնվել 1958 թվականի «Բաց ծովի մասին» ժնկյան կոնվենցիայի 3-րդ հոդվածում:

Բացի այդ, վերը նշված հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է, որ ազատ տարանցման, ինչպես նաև նավահանգիստներից հավասար պայմաններով օգտվելու իրավունքի հետ կապված հարցերը պետք է լուծվեն նշված պետությունների հետ ընդհանուր համաձայնությամբ՝ ծովեզերք ունեցող պետությունների իրավունքների հաշվառմամբ:

Վերլուծելով «Բաց ծովի մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթները՝ միջազգային իրավունքի մի շարք մասնագետներ իրավացիորեն անդում են, որ մինչև ծովեզերք ունեցող պետության հետ երկկողմ պայմանագրի կնքումը ներմայրցամաքային պետությունները տիրապետում են անկատար իրավունքին (*imperfect right*), և ամբողջական իրավունք նշված պետությունները կարող են ստանալ բացառապես երկկողմ կամ տարածաշրջանային համաձայնագրերի կնքմամբ¹:

Ակնհայտ է, որ «Բաց ծովի մասին» կոնվենցիայի դրույթները միջազգային ծովային իրավունքում առաջնահերթությունը տալիս են պետությունների ինքնիշխանության սկզբունքին, և գործնականում առանց ծովափնյա պետության համաձայնության ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը մնում է սուսկ հռչակագրային բնույթ ունեցող դրույթ, որի իրացումը բացառապես կախված է ծովեզերք ունեցող պետության համաձայնությունից:

Փոխադարձության սկզբունքը բացառող իրավադրույթներ նախատեսվեց ՄԱԿ-ի ծովային իրավունքին նվիրված երրորդ խորհրդատուական ընդունված ՄԱԿ-ի Ծովային իրավունքի 1982 թվականի կոնվենցիայում (այսուհետ՝ նաև Կոնվենցիա): Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերը Կոնվենցիայում առանձնացված են 10-րդ մասում:

Կոնվենցիայի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Դեպի ծով ելք չունեցող պետություններն ունեն ծովից և դեպի ծով մուտքի իրավունք՝ սույն Կոնվենցիայով նախատեսված իրավունքների, այդ թվում՝ բաց ծովի ազատությանը և մարդկության ընդհանուր ժառանգությանը վերաբերող իրավունքների իրականացման նպատակով: Այդ նպատակով դեպի ծով ելք չունեցող պետություններն օգտվում են տարանցիկ պետությունների տարածքներով բոլոր տրանսպորտային միջոցներով տարանցման ազատությունից*»:

Վերլուծելով վերը նշված դրույթը՝ կարող են փաստել, որ այն արմատապես տարբերվում է 1958 թվականի «Բաց ծովի մասին» ժնկյան կոնվենցիայի 3-րդ հոդվածի բովանդակությունից, որտեղ պայմանավորվող կողմերը նույնիսկ չեն կիրառում «իրավունք» հասկացությունը և բավարարվում են անորոշ ձևակերպմամբ՝ «*ծովեզերք չունեցող պետությունները պետք է ազատ մուտք ունենան դեպի ծով*»:²

Կոնվենցիայի 125-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից ակնհայտ է, որ ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը աներկբաորեն ձանաչվում է պայմանանավորվող պետությունների կողմից: Այսինքն, ի տարբերություն «Բաց ծովի մասին» ժնկյան կոնվենցիայի, ՄԱԿ-ի Ծովային իրավունքի կոնվենցիան առանց որևէ երկիմաստությունների ամրագրում է ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը:

Կարծում ենք, որ դեպի ծով հասանելիության իրավունքի երաշխավորման հա-

¹ Տե՛ս **G. Lauterpacht**, "Freedom of Transit in International Law", The Grotius Society, Transactions for the Years, 1958-1959, vol.44 L., էջեր 314-315: Տե՛ս նաև **Голицын В.В.**, "Внутриконтинентальные государства и международное морское право", Международное отношение, Москва, 1978, էջ 86:

² Տե՛ս **А.Л. Джарабян**, Проблемы доступа к морю внутриконтинентальных государств в международном праве, РУДН, Москва, 2000, էջ 144:

մատեքստում անկյունաքարային դեր է խաղում այն հանգամանքը, որ դեպի ծով հասանելիության նպատակը շաղկապվում է բաց ծովի ազատության և մարդկության ընդհանուր ժառանգության իրավունքների իրացման հետ:

Վերը նշված իրավակարգավորումը բխում է բաց ծովի ազատության սկզբունքից, հետևաբար ծովեզերք ունեցող պետության տարածքով տարանցման հնարավորությունը պետք է դիտարկել որպես այդ իրավունքի տրամաբանական շարունակություն և արդյունք: Միանշանակորեն կարելի է համաձայնվել Վ. Գոլիցինի այն պնդմանը, որ «այս տեսությունը, առաջին հերթին, դեպի ծով հասանելիության իրավունքը կախվածության մեջ չի դնում ծովեզերք ունեցող պետության համաձայնությունից կամ անհամաձայնությունից՝ դրանով իսկ երաշխավորելով դեպի ծով ելք չունեցող պետությունների շահերի հուսալի պաշտպանությունը: Եվ երկրորդ, ընդգծում է ներմայրցամաքային պետությունների տարանցման յուրահատուկ, տարբերվող բնույթը՝ դիտարկելով այն որպես դեպի ծով հասանելիության իրավունքի բաղկացուցիչ մաս»¹:

Ակնհայտ է, որ Կոնվենցիան, ի տարբերություն միջազգային ծովային իրավունքում մինչ այդ ընդունված համաձայանագրերի, դեպի ծով հասանելիության իրավունքի տրամադրումը չի պայմանավորում փոխադարձության սկզբունքով, ինչը էականորեն բարելավում է ներմայրցամաքային պետությունների իրավական կարգավիճակը:

Ի տարբերություն «Բաց ծովի մասին» կոնվենցիայի՝ Կոնվենցիան կանոնակարգում է նաև ներմայրցամաքային պետություններին տարանցում տրամադրելու պայմաններն ու կարգը՝ նույն հոլվածի 2-րդ մասում ուղղակիորեն նշելով, որ *տարանցման ազատության իրականացման պայմաններն ու կարգը պետք է համաձայնեցվեն դեպի ծով ելք չունեցող շահագրգիռ պետությունների և տարանցիկ պետությունների միջև՝ երկկողմ, ենթատարածաշրջանային կամ տարածաշրջանային համաձայնագրերի միջոցով*:

Ինչ վերաբերում է ծովեզերք ունեցող կամ տարանցիկ պետությունների ինքնիշխանության խնդրին, ապա հավասարակշռությունը ապահովելու նպատակով՝ Կոնվենցիայի 125-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ *«տարանցիկ պետությունները, իրականացնելով իրենց լիակատար ինքնիշխանությունն իրենց տարածքի նկատմամբ, իրավունք ունեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք պետք է ապահովեն, որ սույն մասում դեպի ծով ելք չունեցող պետությունների համար նախատեսված իրավունքներն ու հնարավորությունները որևէ ձևով չտուճահարեն տարանցիկ պետության օրինական շահերը»*:

Վերլուծելով վերը նշված իրավակարգավորումները՝ կարող ենք եզրահանգել, որ Կոնվենցիան, ճանաչելով ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը, միևնույն ժամանակ փորձում է հավասարակշռել պետությունների հակամարտող շահերը:

Անշուշտ, Կոնվենցիայով նախատեսված ներմայրցամաքային պետությունների իրավունքների լիարժեք իրացման համար անհրաժեշտ է երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքում, որը, ի տարբերություն «Բաց ծովի մասին» կոնվենցիայի դրույթների, պայմանավորվող կողմերի համար պարտականություն է (*pactum de contrahendo*)²՝ իրավական և դիվանագիտական անհրաժեշտ միջոցների կիրառմամբ գալ փոխադարձ համաձայնության: Ի թիվս այլնի՝ խոսքը նաև միջազգային

¹ **Голицын В. В.**, Внутриконтинентальные государства и международное морское право. - М.: Междунар. отношения, 1978, էջ 39: Տե՛ս նաև **А. И. Кипеть**, Некоторые аспекты обоснования прав внутриконтинентальных государств в международном морском праве, БГУ, 2010, էջ 71, <https://elib.bsu.by/handle/123456789/5888> (հասանելի է 23. 11. 2021թ.):

² Լրացուցիչ տե՛ս **Y. Tanaka**, նշվ. աշխ., էջ 483, ինչպես նաև **L. Cafiisch**, La convention des Nations Unies sur le droit de la mer adoptée le (1983) 39 ASDI, էջ 97:

պայմանագրերի ներպետական օրենսդրություններում իմպլեմենտացման պարտականության մասին է, առանց որի՝ ներմայրցամաքային պետությունների իրավունքների լիարժեք իրացումը կասկածի տակ կդրվի:

Հարկ է նշել, որ որոշ հեղինակների ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության նպատակով ծովեզերք ունեցող պետության (կամ այլ տարանցիկ պետության) տարածքով տարանցման իրավունքը դիտարկում են ոչ թե միջազգային ծովային իրավունքի, այլ միջազգային տնտեսական իրավունքի կարգավորման առարկա՝ դեպի ծով հասանելիության իրավունքը նույնացնելով միջազգային տնտեսական իրավունքում գործող ազատ տարանցման իրավունքի հետ, ինչը, մեր կարծիքով, անթույլատրելի է և խեղաթյուրում է դեպի ծով հասանելիության իրավունքի էությունը:

Միջազգային տնտեսական իրավունքում ազատ տարանցման դրույթները սահմանափակվում են փոխադարձության պայմանով, ինչը ենթադրում է, որ պայմանավորվող կողմերը, հաշվի առնելով ինքնիշխան հավասարության սկզբունքը, փոխադարձաբար ունեն նույն իրավունքները և կրում են նույն պարտականությունները՝ միմյանց տարածքներով տարանցում ապահովելու հարցում²:

Բացի այդ, ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության նպատակով տրամադրվող տարանցման իրավունքը չի նույնանում միջազգային առևտրի, ինչպես նաև հաղորդակցությունների ընդհանուր ազատության պահանջներից բխող տարանցման հետ: Թեև դեպի ծով ազատ հասանելիության իրավունքի իրացման համար տրամադրվող տարանցումը որոշ դեպքերում կարող է դիտարկվել ընդհանուր տարանցման հասկացության սահմաններում, այնուամենայնիվ այդ երկու իրավունքները թե՛ իրենց առաջացման նախադրյալների առումով, թե՛ իրենց բովանդակությամբ տարբերվում են միմյանցից:

Դեպի ծով հասանելիության համար անհրաժեշտ տարանցումը ուղղված է կոնկրետ նպատակի՝ ծովեզերք ունեցող պետությունների հետ հավասար պայմաններում բաց ծովի ազատությունից օգտվելու և Կոնվենցիայով նախատեսված իրավունքների իրացման համար, ուստի իր բովանդակությամբ այն ավելի նեղ է, քան ընդհանուր տարանցման գաղափարը:

Ծովեզերք ունեցող պետության կողմից առանց ծանրակշիռ պատճառների տարանցման մերժումը կամ կասեցումը պետք է անհամատեղելի համարել դեպի ծով հասանելիության իրավունքին: Վերը նշվածը պետք է դիտարկել նաև Կոնվենցիայի 300-րդ հոդվածով ամրագրված բարեխղճության և իրավունքների չարաշահման արգելքի սկզբունքի համատեքստում:

Ակնհայտ է, որ ներմայրցամաքային պետությունների՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների իրացումը կարող է երաշխավորվել բացառապես ծովեզերք ունեցող պետության տարածքով տարանցման հնարավորության դեպքում, հետևաբար այս ծանրակշիռ հանգամանքը, որը բխում է պատմականորեն ձևավորված իրողությունից, պետք է նվազեցնի ինքնիշխանության սկզբունքի գերիշխող ազդեցությունը և հանգեցնի ներմայրցամաքային պետությունների դեպի ծով հասա-

¹ Տե՛ս, օրինակ՝ **М. Романова**, Принцип свободы транзита в международном праве и национальном законодательстве Республики Беларусь, Журн. междунар. права и междунар. отношений. 2006. № 4. էջ. 21:

² Տե՛ս, օրինակ՝ Համաշխարհային առևտրի կազմակերպության «Սակագների և առևտրի մասին» 1947 թվականի համաձայնախորհրդ (GATT), որի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքով միջազգային տարանցիկ փոխադրման համար ամենահարմար ճանապարհներով կատարվող տարանցիկ փոխադրումն ազատ է մյուս Պայմանավորվող կողմերի տարածքների գնացող՝ տարանցվող փոխադրաբեռների համար: Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=151697> (հասանելի է 23.11.2021թ.):

նելիության իրավունքի իրացմանը գործնականում:

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

➤ Ի տարբերություն «Բաց ծովի մասին կոնվենցիայի»՝ ՄԱԿ-ի Ծովային իրավունքի 1982 թվականի կոնվենցիայով ամրագրվեց ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը,

➤ Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքը սահմանափակված չէ փոխադարձության պայմանով,

➤ Ծովեզերք ունեցող պետության տարածքով (տարանցիկ պետության) տարանցման իրավունքը դեպի ծով հասանելիության իրավունքի բաղկացուցիչ մաս է,

➤ Ներմայրցամաքային պետությունների՝ դեպի ծով հասանելիության իրավունքի լիարժեք իրացման համար անհրաժեշտ է երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքում, ինչը պայմանավորվող կողմերի համար պարտականություն է,

➤ Ծովեզերք ունեցող պետության կողմից առանց ծանրակշիռ պատճառների տարանցման մերժումը կամ կասեցումը պետք է անհամատեղելի համարել դեպի ծով հասանելիության իրավունքին:

СООТНОШЕНИЕ СВОБОДНОГО ДОСТУПА К МОРЮ И СУВЕРЕНИТЕТА ГОСУДАРСТВ В МЕЖДУНАРОДНОМ МОРСКОМ ПРАВЕ

Артур Абовян

Аспирант кафедры европейского и международного права ЕГУ

Проблема обеспечения прав внутриконтинентальных государств в международном морском праве выражена в подчеркнутом противостоянии принципами суверенитета и свободы открытого моря. В статье анализируется содержание принципов суверенитета и свободы открытого моря в международном морском праве, а также представляются необходимые предпосылки для реализации права внутриконтинентальных государств на свободный доступ к морю. В статье сравнительному анализу подвергаются конвенции, касающиеся прав внутриконтинентальных государств, в том числе обсуждаются изменения содержания права доступа к морю. В работе рассматриваются особенности права на транзит в международном морском и международном экономическом праве. В результате исследования делаются выводы о снижении доминирующего влияния принципа суверенитета в международном морском праве.

THE CORRELATION OF FREE ACCESS TO THE SEA AND SOVEREIGNTY OF THE STATES IN THE INTERNATIONAL LAW OF THE SEA

Arthur Abovyan

PHD Student at the YSU Chair of European and International Law

The problem of ensuring the rights of the Landlocked States in the Law of the Sea is expressed in the emphasized conformation between the principles of Sovereignty and Freedom of the High Seas. The content of the principles of Sovereignty and Freedom of the High Seas in the Law of the Sea is analyzed in the article, and it also presents the necessary prerequisites for realizing of the right of Landlocked States to Free Access to the Sea. The conventions concerning the rights of Landlocked States are subject to a comparative analysis in the article, it as well discusses the changes in the content of the right of Access to the Sea. The article addresses the nuances of the right of transit in the Law of the Sea and in International Economic Law. As a result of the study, conclusions are drawn in regard to the reduction of the dominant influence of the Sovereignty principle in the Law of the Sea.

Բանալի բառեր- միջազգային ծովային իրավունք, ներմայրցամաքային պետություններ, ինքնիշխանություն, դեպի ծով հասանելիության իրավունք, տարանցման իրավունք

Ключевые слова: международное морское право, внутриконтинентальные государства, суверенитет, право доступа к морю, транзитное право

Keywords: *International Law of the Sea, Landlocked States, Sovereignty, right of Access to the Sea, transit right*